

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՌԻՍԿԻՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



Funded by
European Union
Humanitarian Aid

ԱՌՆԱՊ
ARNAP
DRR NATIONAL PLATFORM



ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

**METHODOLOGICAL GUIDELINE FOR THE DEVELOPMENT OF DISASTER RISK
REDUCTION AND EMERGENCY ACTION PLAN**

Սույն ուղեցույցը նախատեսված է հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:

Այն ուղղված է ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական անձնակազմի, սովորողների, ծնողների, համայնքի ղեկավար կազմի և շահագրգիռ կառույցների և այլ անձանց՝ աղետների ռիսկի նվազեցման ու արտակարգ իրավիճակների ոլորտում գիտելիքների, կարողությունների ձևավորմանն ու դիմակայման մշակույթի զարգացմանը:

Ուղեցույցը հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 06-ի թիվ.494-Ա և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի թիվ.498-Ա համատեղ հրամաններով:

Սույն ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական Հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության կողմից ֆինանսավորվող Աղետների ռիսկի կառավարման տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Վորլդ Վիժն Հայաստանի գրասենյակի «ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ծրագրի շրջանակներում:

Ուղեցույցը պատրաստվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ու ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնագետների և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի կրթական թեմատիկ խմբի անդամների կողմից: Մշակման աշխատանքներին մասնակցել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի հումանիտար աջակցության գրասենյակի, Վորլդ Վիժնի, «Սեյվ դը չիլդրեն» հայաստանյան գրասենյակի, Հայկական Կարմիր խաչի ընկերության, ՕՔՍՖԱՄ-ի, ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Սեյսմիկ պաշտպանության ծառայության, Փրկարար ծառայության, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և «Լոռե» փրկարար ջոկատի աշխատակիցներ, ուսուցիչներ և աշակերտներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«06» 05 2016թ., N 194 Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

«18» 05 2016 թ., N 198 Ա

ք. Երևան

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, ուսումնական հաստատություններում երեխաների և աշխատակիցների անվտանգության մակարդակի բարձրացման, աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների ոլորտում գիտելիքների, կարողությունների ձևավորման ու աղետների դեպքում դիմակայունության բարձրացման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հաստատել՝

1) ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տարածքի քարտեզի և ուսումնական հաստատության հատակագծի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թերթիկների օրինակելի ձևերը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ուսումնական հաստատության տնօրենի հրամանի օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) աղետներին պատրաստվածության սարքավորումների և պարագաների երաշխավորվող /առաջարկվող/ ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ազդարարման և ուսումնական հաստատության կառավարման՝ ու կապի սխեմաների օրինակելի ձևերը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների տարեկան պլան-ժամանակացույցի օրինակելի ձևը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) տարահանման սխեմայի և հուշաթերթի օրինակելի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների միջոցառումների հաշվառման թերթիկի օրինակելի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) ուսումնական հաստատությունում և շրջակա տարածքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների վիճակագրական տվյալների և տեղեկությունների մատյանի օրինակելի ձևը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) ծնողների տվյալների բազայի օրինակելի ձևը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում ահազանգման մարմինների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների՝ համաձայն N 13 հավելվածի.


14) աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի մշակման գործընթացի ստուգացանկի օրինակելի ձևը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) տիտղոսաթերթի օրինակելի ձևը՝ համաձայն N 15 հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**



Հավելված N 1

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի
2016 թվականի մայիսի 06-ի թիվ.494-Ա
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի մայիսի 18-ի թիվ.498-Ա
համատեղ հրամանի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



Սույն ուղեցույցը նախատեսված է հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՈՒՀ) համար:

Այն ուղղված է ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական անձնակազմի, սովորողների, ծնողների, համայնքի ղեկավար կազմի և շահագրգիռ կառույցների և այլ անձանց՝ աղետների ռիսկի նվազեցման ու արտակարգ իրավիճակների ոլորտում գիտելիքների, կարողությունների ձևավորմանն ու դիմակայման մշակույթի զարգացմանը:

Ծնողները ուսումնական հաստատությանն են վստահում իրենց երեխաների անվտանգությունը:

Երեխաների ուղերձը.

- ՈՒՀ-ները պետք է լինեն անվտանգ և կրթությունը պետք է ընթանա առանց ընդհատումների,
- Երեխաների պաշտպանությունը պետք է լինի առաջնահերթ խնդիր աղետից առաջ, աղետի ժամանակ և դրանից հետո,
- Երեխաներն ունեն մասնակցության և իրենց անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու իրավունք,
- համայնքների ենթակառուցվածքները պետք է լինեն ապահով, իսկ մարդասիրական օգնությունն ու վերականգնումը պետք է օգնեն նվազեցնելու հետագա ռիսկերը,
- աղետների ռիսկի նվազեցումը պետք է հասանելի լինի ամենախոցելի խմբերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան
2. Հիմնական հասկացություններ
3. Հապավումների ցանկ
4. ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի նպատակը և խնդիրները
5. Ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի կառուցվածք
 - 5.1. Տիտղոսաթերթ
 - 5.2. Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը
 - 5.3. Վտանգների, խոցելիության և կարողությունների նկարագրություն
 - 5.3.1. Ուսումնական հաստատությանը բնորոշ վտանգների նկարագրություն
 - Ներքին (կառուցվածքային և ոչ կառուցվածքային) վտանգներ
 - Արտաքին (շրջակա միջավայրի) վտանգներ
 - 5.3.2. Ուսումնական հաստատության խոցելիության նկարագրություն
 - 5.3.3. Ուսումնական հաստատության կարողությունների նկարագրություն
 - Մարդկային ռեսուրսներ
 - Տեխնիկական միջոցներ
 - Ֆինանսական միջոցներ
 - Համագործակցություն
 - 5.4. ԱՌՆ գործողությունների մշակում
 - 5.5. Ուսումնական հաստատության Աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ-ում գործելու կառավարման համակարգ
 - 5.5.1. Համակարգի կառուցվածք և կազմակերպում
 - ԱՌՆ և ԱԻ խորհուրդ
 - ԱՌՆ և ԱԻ խմբեր
 - 5.5.2. Հաղորդակցության ու ազդարարման կազմակերպում
 - 5.5.3. Հոգեբանասոցիալական աջակցության կազմակերպում
 - 5.5.4. Առաջին օգնության կազմակերպում
 - 5.5.5. Տարահանման կազմակերպում
 - 5.5.6. Հրդեհաշիջման կազմակերպում
- 1.6. Կրթության շարունակականության ապահովումն արտակարգ իրավիճակներում
- 1.7. Համագործակցություն
- 1.8. Հավելվածներ
 1. Տարածքի քարտեզներ և ուսումնական հաստատության հատակագիծ
 2. Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թերթիկ
 3. ԱՌՆ և ԱԻ խորհրդի և խմբերի ստեղծման հրամաններ
 4. Աղետների պատրաստվածության պարագաների և սարքավորումների ցանկ
 5. Ուսումնական հաստատության կառավարման, կապի և ազդարարման սխեմա
 6. ԱՌՆ միջոցառումների տարեկան պլան– ժամանակացույց
 7. Տարահանման պլան-սխեմա և հուշաթերթ

8. ԱՌՆ և ԱԻ միջոցառումների հաշվառման թերթիկ
9. Ուսումնական հաստատությունում և շրջակա տարածքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների վիճակագրական տվյալների և տեղեկությունների մատյան
10. Ծնողի կամ խնամակալի տվյալների բազա
11. Ահազանգման և արձագանքման հեռախոսահամարներ
12. ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի ստուգացանկ
13. Ստանդարտ գործառնական ընթացակարգեր

1. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանը աղետների առումով գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության և երկրի կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) և սովորողների ու ուսումնական հաստատությունների արտակարգ իրավիճակներում գործելու կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է կրթական համակարգի անվտանգ գործունեության համար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ որպես յուրահատուկ համակարգ, ԱՌՆ և ԱԻ տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային օբյեկտներ: Սովորողներն առավել խոցելի են, քանի որ նրանց մոտ դեռևս ամբողջական ձևավորված չեն կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ինքնապաշտպանվելու մեխանիզմները: Հուզական ֆոնի ազդեցության տակ նրանք կարող են խուճապի մատնվել, կատարել սեփական անձին կամ այլ անձանց վնասող գործողություններ, դրանով իսկ խոչընդոտելով ստեղծված իրավիճակում իրենց կողմնորոշվելուն և համապատասխան որոշում կայացնելուն:

Սովորողների և աշխատակազմի անվտանգության ապահովումը կարևորագույն հիմնախնդիր է: Վերջինիս լուծման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատություններում իրականացնել ԱՌՆ և ԱԻ գործընթացների արդյունավետ կառավարում (պլանավորում, իրականացում, վերահսկում):

Այս գործընթացը խթանում է ոչ միայն ուսումնական հաստատության վարչական, մանկավարժական անձնակազմի, սովորողների, այլև՝ ծնողների, համայնքի ղեկավար կազմի և շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների ԱՌՆ ոլորտում գիտելիքների, կարողությունների, հմտությունների, մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսումնական հաստատության անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով մշակվում է ուսումնական հաստատության և հարակից տարածքի առանձնահատկություններից բխող ԱՌՆ և ԱԻ գործելու պլան (այսուհետ՝ Պլան): Այն պետք է լինի իրատեսական և մատչելի սովորողների, ուսուցիչների, աշխատակիցների և ծնողների համար: ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի մշակումն ու զարգացումը նպաստում է արտակարգ իրավիճակների կառավարման արդյունավետության բարձրացմանը և անվտանգության մշակույթի ձևավորմանը:

Պլանները կազմելիս, հաշվի են առնվում սովորողների և անձնակազմի տարիքային, գենդերային, լեզվական և սահմանափակ կարողություններով սովորողների առանձնահատկությունները: Պլանում հաշվի են առնվում նաև ֆիզիկական, զգայական, շարժական, մտավոր զարգացման խնդիր ունեցող սովորողների, ինչպես նաև մանկավարժների հատուկ կարիքները:

Պլանը պարունակում է արտակարգ իրավիճակներում ուսումնական հաստատության անձնակազմի, երեխաների, նրանց ընտանիքների հետ հաղորդակցվելու ձևերը և միջոցները:

Պլանում ընդգրկված գործողություններն անհրաժեշտ է պարբերաբար փորձարկել, ճշգրտել և թարմացնել: Պատրաստվածությունը ներառում է իրավիճակային խաղեր, ուսումնական վարժություններ և վարժանքներ՝ ուսումնական հաստատության սովորողների ու անձնակազմի և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Պլանում անհրաժեշտ է հստակ սահմանել յուրաքանչյուրի դերակատարումը և պարտականությունները:

Պլանը պետք է պարունակի հետևյալ հարցերի պատասխանները. ինչ՞ միջոցառումներ են ձեռնարկվելու, ե՞րբ, ո՞վ և ի՞նչ մեթոդներով է իրականացնելու դրանք:

Աղետներին պատրաստվածության արդյունավետ պլանավորումը պայմանավորված է արդյունավետ կառավարմամբ և պատրաստված անձնակազմով: Ուսումնական հաստատության տնօրենը և անձնակազմը, ԱԻ-ում բնակչության պաշտպանության բնագավառի (այսուհետ՝ լիազորված մարմնի) համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների ու ծնողների աջակցությամբ և սովորողների մասնակցությամբ, ապահովում է ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործընթացը:

Պլանը ուսումնական հաստատության դիմակայունության և համալիր անվտանգության անբաժանելի մասն է:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

Արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման

Արտակարգ իրավիճակների կանխում՝ արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում.

Արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցում՝ նախօրոք իրականացվող միջոցառումների համալիր՝ արտակարգ իրավիճակների ազդեցության հնարավոր մեղմացման համար.

Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝ արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար.

Աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս.

Տարահանում՝ արտակարգ իրավիճակներում վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական ու մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում.

Պատսպարում՝ արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում.

Անհատական պաշտպանություն՝ մարդկանց՝ ճառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում. փրկարարական աշխատանքներ՝ մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով միջոցառումների համալիր.

Վտանգ՝ պոտենցիալ գործընթաց կամ երևույթ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, խեղանդամության, հիվանդությունների կամ այլ առողջական հետևանքների, գույքի վնասման, կենսամիջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վնասի: Կարելի է ասել, որ վտանգը պոտենցիալ երևույթներից և գործընթացներից ոչ ցանկալի հետևանքներ ունենալու ակնկալիքն է:

Խոցելիություն՝ համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ այն պայմաններն ու բնութագրերը, որոնք բարձրացնում են վերջիններիս վտանգի ավերիչ ազդեցություններին

ենթարկվելու հավանականությունը: Կարելի է ասել, որ խոցելիությունը վտանգից անպաշտպան-վածության աստիճանը կամ պոտենցիալ վտանգավոր երևույթի զարգացման արդյունքում ծագած կորուստների աստիճանն է (0-100)%:

Աղետի ռիսկ՝ վտանգի կամ վտանգավոր երևույթի հավանական ազդեցության հետևանքով հասարակական ծառայությունների, կենսամիջոցների և ունեցվածքի, առողջության վատթարացմամբ և մարդկային զոհերով արտահայտված հնարավոր աղետալի կորուստներ, որոնք կարող են առաջանալ որևէ համայնքում կամ հանրության մեջ: Կարելի է ասել, որ աղետի ռիսկը վտանգի կամ վտանգավոր երևույթի աղետալի ազդեցության հավանական չափն է՝ արտահայտված կորուստներով:

Կարողություն՝ կարողությունն առկա բոլոր պաշարների ամբողջությունն է, որը կարող է նպաստել անվտանգության ապահովմանը

Դիմակայություն՝ վտանգին դիմակայելու ունակությունն է, որն իր մեջ ներառում է վտանգի հետևանքներին դիմակայելը, դրան հարմարվելը և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելը, այդ թվում՝ ՈՒՀ հիմնական գործառույթների պահպանման և վերականգնման միջոցով:

Թաղային միավոր (այսուհետ՝ ԹՄ)՝ դպրոցի կամ մանկապարտեզի շուրջ 500-700 մետր շառավղով տարածքում ընկած շենքերի և շինությունների բնակչության միավորում: ԹՄ առաջնային տարահանման վայր է հանդիսանում հենց այն դպրոցը կամ մանկապարտեզը, որն արտացոլվում է տվյալ համայնքի (Երևան քաղաքի վարչական շրջանի) տարահանման պլանում: Այս դեպքում դպրոցը կամ մանկապարտեզը հանդիսանում է ԹՄ կենտրոն, որի միջոցով աղետի դեպքում կազմակերպվում է բնակչության նախնական տարահանումն ու հաշվառումը, ինչպես նաև բնակչության ուսուցումը:

3. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՌ – աղետների ռիսկ

ԱՌՆ – աղետների ռիսկի նվազեցում

ԱՌԿ – աղետների ռիսկի կառավարում

ԱԻ – արտակարգ իրավիճակներ

ԱՕ – առաջին օգնություն

ՀՀ ԱԻՆ – Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

լիազոր մարմին – ՀՀ ԱԻՆ կամ ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանում

ՀԿԽԸ – հայկական կարմիր խաչի ընկերություն

ՓԾ – փրկարար ծառայություն

ՄՓՎ – մարզային փրկարարական վարչություն

ՈԻՀ – ուսումնական հաստատություն

ՀՍ – հոգեբանասոցիալական

4. ԱՌՆ ԵՎ ԱԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի նպատակն է ուսումնական հաստատությունում սովորողների և անձնակազմի անվտանգության և կրթական համակարգի դիմակայունության ապահովումն արտակարգ իրավիճակների ժամանակ:

► **ԱՌՆ և ԱԻ գործելու պլանն ուղղված է.**

ա. ուսումնական հաստատության և շրջակա տարածքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմանը,

բ. արտակարգ իրավիճակներում արագ և արդյունավետ արձագանքմանը,

գ. ուսումնական գործընթացի անխզելիության և շարունակականության ապահովմանը:

► **ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի խնդիրներն են.**

- ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու համակարգի ձևավորումն ու զարգացումը,
- ուսումնական հաստատության և շրջակա տարածքում բնական և տեխնածին բնույթի վտանգների բացահայտումը,
- ուսումնական հաստատության խոցելիության և կարողությունների գնահատումը,
- աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների մշակումը,
- գիտելիքի, նորարարության և կրթության միջոցով սովորողների և անձնակազմի շրջանում անվտանգության և դիմակայման մշակույթի ձևավորման միջոցառումների մշակումը,
- ԱԻ արձագանքման միջոցառումների մշակումը, այդ թվում՝ կյանքի փրկության և վնասվածքների նվազեցման, ուսումնական հաստատության գույքի և փաստաթղթերի պահպանման:

Պլանի մշակման աշխատանքներին կարող են մասնակցել նաև համայնքի ներկայացուցիչները, ներառյալ՝ իրավապահները, հրշեջները, շտապօգնության բժիշկները, բուժաշխատողները և հոգեբանները, հասարակական և ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց մասնագիտական հմտություններով գործնական օժանդակություն կցուցաբերեն պլանի կազմմանը:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌՆ ԵՎ ԱԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

► 5.1. Տիրապահություն

Համաձայնեցվում է համայնքի ղեկավարի և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության մարզային /տարածքային ստորաբաժանումների հետ, հաստատվում է ուսումնական հաստատության ղեկավարի կողմից (հավելված 15):

► 5.2. Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը

Այս բաժնում անհրաժեշտ է ներկայացնել հակիրճ տեղեկություններ հանրակրթական ուսումնական հաստատության վերաբերյալ (մանրամասն տվյալները տես հավելված 2-ում):

Որոշ տվյալներ ներկայացնելու ժամանակ անհրաժեշտ է համագործակցել մասնագիտական կառույցների հետ:

Հաստատության անվանում _____

Հասցե՝ _____

Հարկայնություն _____

Մասնաշենքերի քանակ _____

Տարածքի մակերես _____մ²

Շենքի մակերես _____մ²

Կառուցման տարեթիվ _____

Վերակառուցման տարեթիվ _____

Ելքերի քանակ. հիմնական՝ _____ պահեստային՝ _____

Հերթայնություն _____

Նախագծային հզորություն (աշակերտ) _____

Սովորողների թիվ _____

• Առաջին հերթ _____

• Երկրորդ հերթ _____

Աշխատակիցների ընդհանուր թիվ _____

► 5.3. Վտանգների, խոցելիության և կարողությունների նկարագրություն

Ուսումնական հաստատության անվտանգության ապահովման մեկնարկային կարևորագույն միջոցառումներից է ՌԻՀ վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատումը, որը թույլ է տալիս կազմակերպել ԱՌՆ կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների պլանավորումը՝ հաշվի առնելով ՌԻՀ հնարավորությունները:

Ուսումնական հաստատության վտանգի, խոցելիության և կարողությունների բացահայտման գործընթացն իրականացնում է ՌԻՀ ԱՌՆ խորհուրդը՝ համաձայն համապատասխան հարցաշարի (հավելվածներ 2 և 4): Վտանգների բացահայտման ժամանակ պետք է հաշվի առնել նաև համայնքին/մարզին սպառնացող վտանգները:

Անհրաժեշտության դեպքում, Խորհուրդը կարող է դիմել համապատասխան ոլորտի պետական լիազոր մարմնին կամ համապատասխան արտոնագիր ունեցող մասնագիտացված կառույցներին՝ վտանգի և խոցելիության գնահատումն իրականացնելու համար:

Խոցելիության գնահատման ընթացքում հաշվի են առնվում աշակերտների շրջանում հատուկ կարիքներով երեխաների առկայությունը, տղաների ու աղջիկների ռիսկի ենթարկվելու հավանականությունը, անվտանգ տարածքն ու տարահանման ուղիները և ՌԻՀ՝ որպես անվտանգ վայր կամ ժամանակավոր կացարան:

Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման արդյունքները ներկայացվում են «Վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թերթիկ»-ում՝ հավելված 2:

► 5.3.1. Վտանգների նկարագրություն

Նկարագրվում են ուսումնական հաստատությանը սպառնացող կառուցվածքային և ոչ կառուցվածքային ներքին վտանգները, ինչպես նաև հնարավոր արտաքին սպառնալիքները: Վտանգների բացահայտման գործընթացի կազմակերպման համար ՌԻՀ Խորհուրդը հիմնում է ժամանակավոր աշխատանքային խումբ, որի կազմի մեջ մտնում են վարչական աշխատողներ, դասավանդողներ, սովորողներ, ծնողներ, համայնքի ներկայացուցիչներ: Խումբը կարող է համալրվել նաև մասնագետներով (օրինակ՝ փրկարար, սեյսմիկ ինժեներ, հրշեջ, բուժաշխատող և այլն): Ցանկալի է նաև խմբում ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց (սովորողների, բնակիչների): Աշխատանքային խումբը իրականացնում է աշխատանքը և ներկայացնում է արդյունքները Խորհրդին՝ օգտագործելով հավելված 2-ում ներկայացված հարցաթերթիկը:

• Ներքին (կառուցվածքային և ոչ կառուցվածքային) վտանգներ

Ներքին վտանգները ներառում են ուսումնական հաստատության կառուցվածքային և ոչ կառուցվածքային վտանգները:

Կառուցվածքային վտանգները կապված են շենքերի, շինությունների, տարածքի, ենթակառուցվածքների (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրահեռացման, կոյուղու համակարգեր) հետ: Ոչ կառուցվածքային վտանգները կապված են ուսումնական հաստատության ոչ կառուցվածքային տարրերի հետ (կահույք, կախովի

առաստաղներ, լուսավորման սարքավորումներ, համակարգիչներ, կենցաղային տեխնիկա, ցուցափեղկեր, գրադարակներ, օդափոխման սարքավորումներ, ծաղկամաններ և այլն):

- *Արտաքին (շրջակա տարածքի) վտանգներ*

Արտաքին վտանգները ներառում են ուսումնական հաստատությանը սպառնացող բնածին, տեխնածին վտանգները (երկրաշարժ, սողանք, սելավ, քարաթափում, ջրհեղեղ, հրդեհ, ճառագայթային, քիմիական արտանետումներ, համաճարակներ, կենսաբանական վտանգներ և այլն): Արտաքին վտանգները բացահայտվում են խորհրդի կողմից՝ օգտագործելով **հավելված 2-ում** ներկայացված հարցաթերթիկը: Խորհուրդ է տրվում նաև համագործակցել ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանումների և համայնքի ներկայացուցիչների հետ:

► **5.3.2. Ուսումնական հաստատության խոցելիության գնահատում**

Խոցելիությունն ուսումնական հաստատության որոշակի պայմանների ու բնութագրերի համախումբն է, որոնք բարձրացնում են ՌԻՀ՝ վտանգի ավերիչ ազդեցությանը ենթարկվելու հավանականությունը: Կարելի է ասել, որ խոցելիությունը վտանգից անպաշտպանվածության աստիճանն է:

Խոցելիության օրինակներ են՝ ՌԻՀ շենքի նախագծման և կառուցման ցածր որակը, նյութական արժեքների (ուսումնական գրականություն, գույք) ոչ բավարար պաշտպանվածությունը, սովորողների և դասավանդողների իրազեկվածության և տեղեկացվածության ցածր մակարդակը, վարչական աշխատողների կողմից աղետների ռիսկի նվազեցման և պատրաստվածության միջոցառումների կարևորության ոչ բավարար գիտակցումը: Հրդեհային անվտանգության կանոնների պահանջները չկատարելը (կրակմարիչների, ներքին ջրամատակարարման բացակայությունը, հիդրանտների չաշխատելը) բարձրացնում է ՌԻՀ խոցելիությունը հրդեհի վտանգի ժամանակ:

Տարահանման պլանի բացակայությունը և վարժանքների ոչ կանոնավոր իրականացումը ևս բարձրացնում են ՌԻՀ խոցելիությունը բոլոր այն վտանգների նկատմամբ, որոնց ծագման դեպքում անհրաժեշտ է իրականացնել անձնակազմի և սովորողների տարահանում:

Ուսումնական հաստատության խոցելիությունը բացահայտվում է օգտագործելով **հավելված 2-ում** ներկայացված հարցաթերթիկը:

► **5.3.3. Կարողություններ**

Կարողությունն ուսումնական հաստատության բոլոր պաշարների ամբողջությունն է, որը կարող է նպաստել ՌԻՀ անվտանգության ապահովմանը: Օրինակ՝ ՌԻՀ ԱՌՆ կառավարման համակարգի առկայությունը, ԱՌՆ գիտելիքների առկայությունը դասավանդողների և սովորողների շրջանում, ազդարարման համակարգի առկայությունը, ֆինանսական և տրանսպորտային միջոցների առկայությունը, տարբեր կառույցների հետ համագործակցությունը, ենթակառուցվածքները, նյութական միջոցները: Կարողությունը կարելի է սահմանել որպես հնարավորություն:

Կարողության ավելացումը բերում է խոցելիության նվազման: ԱՌՆ գործընթացում խնդիրների լուծման արդյունքում ՈՒՀ խոցելիությունը փոխակերպվում է կարողության: Օրինակ՝ ՈՒՀ շենքի սեյսմազինվածության մակարդակի բարձրացումը հանգեցնում է կարողության բարձրացման: ՈՒՀ կարողությունների թվին են պատկանում՝

- Մարդկային ռեսուրսներ՝ ՈՒՀ վարչական, մանկավարժական և օժանդակ աշխատակազմը, ծնողական խորհրդի անդամները և այլն:
- Տեխնիկական միջոցներ՝ ՈՒՀ կապի (ֆիքսված և բջջային հեռախոս, ռադիո, ինտերնետ, ֆաքսիմիլային և այլն), ազդարարման միջոցներ (շակ, զանգ, բարձրախոս, ավանդական միջոցներ՝ առարկաներ, որոնց գործարկումը առաջացնում է բարձր հնչողություն ունեցող ձայն), տրանսպորտային միջոցներ և այլն:
- Ֆինանսական միջոցներ՝ ՈՒՀ տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցները (բյուջետային և արտաբյուջետային), որոնք կարող են ուղղվել ԱՌՆ միջոցառումների իրականացմանը:
- Համագործակցություն՝ ՈՒՀ-ի հետ ԱՌՆ ոլորտում փոխհամագործակցող մարմինների առկայություն՝ պետական (ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայություն, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն, ԱՌՆԱՊ հիմնադրամ և այլն), միջազգային (ՄԱԿ, ՕԲՍՖԱՄ, Վորլդ Վիժն Հայաստան և այլն), հասարակական (ՀԿԻԸ և այլն), մասնավոր կառույցներ և կազմակերպություններ:

Ուսումնական հաստատության կարողությունը բացահայտվում է օգտագործելով **հավելված 2-ում** ներկայացված հարցաթերթիկը:

► 5.4. ԱՌՆ գործողությունների մշակումը

ԱՌՆ գործողությունների մշակումը իրականացնում է ՈՒՀ ԱՌՆ խորհուրդը՝ ՈՒՀ սպառնացող վտանգների, խոցելիության, կարողությունների վերլուծության և բացահայտված խնդիրների առաջնահերթությունների սահմանման հիման վրա:

ԱՌՆ գործողությունները սահմանվում են խորհրդի անդամների քննարկման և ընդհանուր համաձայնության արդյունքում: Անհրաժեշտության դեպքում ներգրավվում են համապատասխան ոլորտի մասնագետներ: Այս փուլում որոշվում են նաև գործողության իրականացման ժամկետները, պատասխանատուները, ֆինանսավորման հնարավոր չափն ու աղբյուրները, համագործակցող կողմերը:

Արդյունքները ներկայացվում են «ՈՒՀ ԱՌՆ միջոցառումների տարեկան պլանում»-ում (հավելված 6):

► 5.5. Ուսումնական հաստատության՝ Աղետների ռիսկի նվազեցման և ԱԻ-ում գործելու կառավարման համակարգը

Այս բաժնում նկարագրվում է ուսումնական հաստատության՝ ԱՌՆ և ԱԻ գործելու համակարգի հիմնական խնդիրները, այդ համակարգի կառավարման սկզբունքները և գործունեությունը:

Քանի որ ուսումնական հաստատությունների ղեկավարության, ինչպես ցանկացած կառույցի/մարմնի ղեկավարի, առաջնահերթ խնդիրներից են աղետների ռիսկի նվազեցումը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը, անհրաժեշտ է ուսումնական հաստատություններում ստեղծել ԱՌՆ և ԱԻ գործելու կառավարման համակարգ:

ՈւՀ՝ ԱՌՆ և ԱԻ-ում գործելու կառավարման խորհուրդը ստեղծվում է ՈւՀ ղեկավարի հրամանով: Համակարգը ղեկավարում է ԱՌՆ և ԱԻ խորհուրդը: Խորհուրդը ղեկավարում է ՈՒՀ ղեկավարը: ՈՒՀ ղեկավարի տեղակալը հանդիսանում է ԱՌՆ և ԱԻ խորհրդի ղեկավարի տեղակալ և տարահանման կազմակերպման խմբի ղեկավար: Ընդգրկվում են ՈՒՀ ղեկավարի տեղակալը, դասավանդողներ, ուսուցիչներ, մասնագիտացված խմբերի ղեկավարներ, աշակերտական և ծնողական խորհրդի ներկայացուցիչներ, ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ՏԻՄ-ի ներկայացուցիչ: Կարող են ներգրավվել նաև ՀՀ ԱԻՆ, տարածքային ոստիկանության կամ բժշկական հաստատության ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

► 5.5.1. Համակարգի կառուցվածքը և կազմակերպումը

Այս ենթաբաժնում ներկայացվում է ՈՒՀ՝ աղետների ռիսկի կառավարման համակարգի առաջարկվող կառուցվածքը, անհատական կազմը, գործառնությունները:

ԱՌՆ և ԱԻ խորհուրդ

Կազմը.

- խորհրդի ղեկավար՝ ՈՒՀ ղեկավար
- խորհրդի ղեկավարի տեղակալ՝ ՈՒՀ ղեկավարի տեղակալ
- խորհրդի անդամներ՝ ՈՒՀ տեղակալ, գինդեկ, խմբերի ղեկավարներ, այլ անդամներ


ԱՌՆ և ԱԻ խորհրդի հիմնական գործառնություններն են.

- Ուսումնական հաստատության սովորողների ու անձնակազմի պաշտպանության ապահովումը
- ԱՌՆ և ԱԻ խմբերի ստեղծումը և գործունեության համակարգումը,
- ԱՌՆ և ԱԻ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, գնահատումը, վերահսկումը,
- ԱՌՆ և ԱԻ խմբերի և նրանց աշխատակարգերի ձևավորումը,
- աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,
- ուսումնական հաստատության շենքին ու հարակից տարածքին սպառնացող վտանգների և խոցելիության գնահատումն ու դրանց նվազեցմանն ուղղված աշխատանքների պլանավորումն ու իրականացումը,
- ուսումնական հաստատությունում և համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորմանն ու տարածմանը նպաստող միջոցառումների (ԱՌՆ մրցումներ, տարահանման և այլ տիպի վարժանքներ, վիկտորինաներ, սպորտային միջոցառումներ և այլն) կազմակերպումը,
- Ուսումնական հաստատության՝ աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն ու վերջինիս ներգրավվածության ապահովումը համայնքի ԱԻ արձագանքման գործընթացին. այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսաապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը.
- ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի ԱՌՆ և զարգացման պլանում,
- սովորողների և մյուս շահագրգիռ կողմերի՝ ԱՌՆ և ԱԻ գործընթացներին մասնակցության, համագործակցության և փորձի փոխանակման ապահովումն ու համակարգումը,
- ուսումնական հաստատության ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս ներառումը համայնքի ընդհանուր/վաղ ազդարարման համակարգերում (ՈւՀ ազդարարման համակարգը պետք է լինի համայնքի ազդարարման համակարգի մի մաս, օղակ),
- «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատության ակտիվ ներգրավվածության ապահովումը,
- սովորողների և աշխատակիցների համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների մշակումը, դրանց կիրառման ապահովումը:

«Ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու միջոցառումները իրականացվում են Խորհրդի կողմից կայացված որոշումների հիման վրա, որոնց տրվում է հերթական համար և գրանցվում են համապատասխան մատյանում:

Խորհուրդը նախատեսում է յուրաքանչյուր տարի անցկացնել առնվազն երկու պլանային նիստ (ուսումնական տարվա սկզբում և երրորդ եռամսյակում), որը ներառվում է տարեկան պլանում (հավելված 6):

**Ուսումնական հաստատության՝ աղետների ռիսկի
կառավարման համակարգի կառուցվածքը**



Ուսումնական հաստատության կարիքների հիման վրա Խորհուրդը կարող է հիմնել այլ խմբեր ևս (օրինակ՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի 10 կմ շառավղով գտնվող ՌԻՀ-ների համար ճառագայթային-քիմիական մոնիթորինգի խումբ):

ԱՌՆ և ԱԻ մասնագիտացված խմբեր

Այս բաժնում ներկայացվում են ՌԻՀ մասնագիտացված խմբերի գործառույթները: Ստորև ներկայացվող գործառույթների ապահովումը պարտադիր է յուրաքանչյուր ՌԻՀ-ի համար: Այդ նպատակով առաջարկվում է ձևավորել առնվազն 5 մասնագիտացված խումբ: Սակայն, կախված ՌԻՀ անձնակազմի և սովորողների քանակից, ինչպես նաև ՌԻՀ

հնարավորություններից, կարող են ստեղծվել լրացուցիչ (օրինակ՝ ճառագայթային, քիմիական մոնիթորինգի, տրանսպորտային, պատսպարման և այլն) խմբերը կամ տարանջատել առաջարկվող խմբերը (օրինակ՝ հրշեջ-փրկարարական խմբի փոխարեն ստեղծել առանձին հրշեջ խումբ և փրկարարական խումբ և այլն): Առանձին դեպքերում հնարավոր է խմբերի համադրելիություն՝ պահպանելով երկու համադրվող խմբերի գործառույթները (օրինակ՝ միացնել հրշեջ-փրկարարական և տարահանման ու պատսպարման խմբերը կամ առաջին օգնության ու հոգեբանասոցիալական աջակցության խմբերը):

Խմբերի անդամներն ընտրվում են համամասնորեն ՈՒՀ աշխատակազմից՝ դասավանդողներ և այլ աշխատակիցներ, ծնողական կոմիտեների անդամներ, սովորողներ: Խմբերում կարող են ընդգրկվել ներկայացուցիչներ լիազոր մարմնից, տեղական ինքնակառավարման մարմնից, համատիրությունից և մոտակա ձեռնարկատիրական կազմակերպությունից:

Խմբերն իրենց մասով ներկայացնում են առաջարկություններ ՈՒՀ գործողությունների տարեկան պլանի մշակման համար: Առաջարկությունները պետք է ներառեն միջոցառումների անվանումներ, դրանց կատարման ժամկետներ, պատասխանատուներ, ֆինանսավորման աղբյուր, նյութական միջոցների պահանջարկ և այլ անհրաժեշտ տեղեկություններ:

ԱՌՆ և ԱԻ արձագանքման մասնագիտացված խմբերի առաջարկվող գործառույթները.

1) Հրշեջ-փրկարարական խումբ

- իրականացնում է ուսումնական հաստատության շենքի և տեղանքի վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատում.
- Խորհրդին ներկայացնում է առաջարկներ գնահատման արդյունքում բացահայտված կառուցվածքային և ոչ կառուցվածքային ռիսկերի նվազեցման ուղղությամբ.
- նախապատրաստում է առաջարկներ և կազմակերպում աղետների կանխարգելման կամ հետևանքների նվազեցման պարզագույն միջոցառումներ.
- իր իրավասությունների շրջանակում իրականացնում է որոնման ու փրկման աշխատանքներ.
- կուտակում, թարմացնում և պահում է աշխատունակ վիճակում ՈՒՀ փրկարարական գույքն ու սարքավորումները.
- նախապատրաստում է խմբի անդամներին և ՈՒՀ աշխատակազմին (հրշեջ-փրկարարական խմբում չընդգրկված անձնակազմ)՝ կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ.
- իրականացնում է հրդեհների կանխարգելում և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ.
- կուտակում, թարմացնում և պահում է աշխատունակ վիճակում հրդեհաշիջման միջոցները.
- կազմակերպում և անցկացնում է վարժանքներ.
- աղետի դեպքում իրականացնում է իր տարածքի խոցված հատվածի գոտու սահմանազատում:

2) Տարահանման և պատսպարման խումբ

- մշակում է ուսումնական հաստատության տարահանման սխեմաները և հուշաթերթիկը.
- տեղական ինքնակառավարման մարմնի հետ համատեղ մշակում է աղետների դեպքում ուսումնական հաստատության տարահանման պլանը՝ համաձայնացնելով լիազոր մարմնի հետ.
- համաձայն ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու տարեկան պլանի՝ նախապատրաստում և անցկացնում է տարահանման վարժանքներ՝ տարեկան առնվազն երկու անգամ.
- ապահովում է հատուկ կարիքավոր երեխաների անվտանգ տարահանումը.
- մշտապես հսկողություն է իրականացնում խոցելիության գնահատման թերթիկի «Տարահանում» ենթաբաժնում նշված պահանջների կատարման ուղղությամբ.
- ԱՌՆ և ԱԻ խորհրդին ներկայացնում է իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություններ.
- մասնակցում է ուսումնական հաստատության շենքի և տեղանքի վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատմանը.
- ՈւՀ շենքային պայմաններից ելնելով՝ կազմում է ՈւՀ պատսպարման սխեման ու պատսպարման պլանը, իրականացնում է պատսպարման հաշվարկները (օրինակ՝ ՈւՀ նկուղում առավելագույն պատսպարվողների հաշվարկ), քայլեր է ձեռնարկում ՈւՀ այլ տարածքները պատսպարման համար կիրառելի դարձնելու ուղղությամբ (օրինակ՝ կիսանկուղային հարկերի ու այլ շինությունների հարմարեցում պատսպարման համար):

3) Առաջին օգնության (ԱՕ) խումբ

- նպաստում է ուսումնական հաստատությունում ԱՕ տրամադրման և կազմակերպման կարողությունների զարգացմանը.
- մասնակցում է ԱՌՆ և ԱԻ խորհրդի կողմից կազմակերպված ԱՕ արտադասարանային պարապմունքների անցկացմանը.
- համաձայն ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի՝ պարբերաբար իրականացվող վարժանքների միջոցով ապահովում է ԱՕ պատրաստվածության բարձր մակարդակը և գործողությունների փոխկապակցվածությունը.
- կազմակերպում է արտակարգ իրավիճակներում տուժածներին ԱՕ տրամադրումը.
- ապահովում է տուժածների վերաբերյալ տեղեկությունների հավաքումն ու մասնագետներին փոխանցումը, օժանդակում է արագ արձագանքման համայնքային խմբերին:

4) Հաղորդակցության ու ազդարարման կազմակերպման խումբ

- կազմում է ուսումնական հաստատության ազդարարման սխեմա.
- կազմում է տեղեկատվության փոխանակման սխեման բացատրաթերթիկով.
- իրականացնում է հաղորդակցություն և տեղեկատվության փոխանակում լիազորմարմնի տարածքային ստորաբաժանման, ՏԻՄ և այլ շահագրգիռ կառույցների հետ.
- մասնակցում է ՈՒՀ շենքի և տեղանքի վտանգների, խոցելիության և կարողությունների գնահատմանը.
- պարբերաբար ստուգում, փորձարկում և պահպանում է սարքին վիճակում ազդարարման ու կապի միջոցները.
- կազմակերպում և անցկացնում է ազդարարման վարժանքներ.

5) Հոգեբանասոցիալական աջակցության խումբ

- նպաստում է ուսումնական հաստատությունում հոգեբանասոցիալական աջակցության և կազմակերպման կարողությունների զարգացմանը,
- մասնակցում է ԱՌՆ խորհրդի կողմից կազմակերպված արտադասարանային պարապմունքների և վարժանքների իրականացմանը,
- համաձայն ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի՝ պարբերաբար իրականացվող վարժանքների միջոցով ապահովում է խմբի պատրաստվածության բարձր մակարդակ և գործողությունների փոխկապակցվածություն,
- օժանդակում է արագ արձագանքման համայնքային խմբերին:

► 5.5.2. Հաղորդակցության ու ազդարարման կազմակերպում

ԱԻ դեպքում ուսումնական հաստատության ղեկավարի և ուսուցչական կազմի, սովորողների ազդարարումը կազմակերպվում է հաղորդակցության ու ազդարարման կազմակերպման խմբի կողմից: Նույն խումբը պատասխանատու է նաև շահագրգիռ մարմինների ու կառույցների հետ հաղորդակցության իրականացման համար:

Հաղորդակցության ու ազդարարման կազմակերպումը ներառում է ԱՌՆ և ԱԻ վերաբերյալ ուսումնական հաստատության և ՀՀ ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման, ինչպես նաև, ըստ ուղղությունների, պետական այլ մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմնի միջև տեղեկատվության փոխանակման կարգի ու պարբերականության սահմանումը:

Հաղորդակցության ու ազդարարման պլանավորումը իրականացվում է յուրաքանչյուր տարի ազդարարվողների կամ տեղեկատվության հաղորդման շահառուների տվյալների փոփոխման դեպքում: Այս նպատակով յուրաքանչյուր տարի ճշգրտվում են ազդարարման և տեղեկատվության հաղորդման սխեմաներն ու ցուցակները:

Հաղորդակցության ու ազդարարման պլանավորումը ներառում է՝

- ազդարարման համակարգի ստեղծում.

- ազդարարման և տեղեկատվության հաղորդման սխեմաների ու ցուցակների մշակում և թարմացում.
- աշակերտների և անձնակազմի ազդարարման կարգի սահմանում.
- ազդարարման ու կապի միջոցների պարբերաբար ստուգում, փորձարկում և աշխատունակ վիճակում պահպանում.
- ազդարարման վարժանքների կազմակերպում և անցկացում:

5.5.3. Հոգեբանասոցիալական աջակցության կազմակերպում

Արտակարգ իրավիճակները հանդիսանում են նաև խոշոր սթրեսածին գործոն, ինչը կարող է պատճառ հանդիսանալ տարաբնույթ հոգեբանական և սոցիալական խաթարումների: Դրանց հոգեբանասոցիալական ազդեցության գոտին ավելի ընդարձակ է, իսկ ժամանակաշրջանը՝ երկարատև:

ԱՌ ազդեցության աստիճանը պայմանավորված է ինչպես արտակարգ իրավիճակի ուժգնությամբ, այնպես էլ մարդու անհատական (հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններ, գիտելիքներ, կարողություններ) և միջավայրային գործոններով (խուճապ, խառնաշփոթ, անկազմակերպվածություն կամ հուսադրող անձանց, օժանդակող ծառայությունների առկայություն և այլն): Մարդու անհատական ռեսուրսները միշտ չէ, որ բավարար են սթրեսը հաղթահարելու համար, հատկապես երեխաների մոտ դրանք դեռևս լիարժեք ձևավորված չեն: Ուստի, երեխաների ԱՌ ազդեցության հոգեբանասոցիալական ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ինչպես նրանց անհատական ռեսուրսների զարգացումը, այնպես էլ հոգեբանասոցիալական օժանդակությունն արտակարգ իրավիճակների ընթացքում և դրանցից հետո:

Ուսումնական հաստատության ԱՌՆ պլանը հոգեբանասոցիալական աջակցման մասով պետք է ներառի.

1. Արտակարգ իրավիճակներում, նախքան մասնագիտացված հոգեբանական աջակցության խմբի ժամանումը, ուսումնական հաստատության մասնագետների ուժերով սովորողների, ինչպես նաև նրանց մերձավորների և ուսումնական հաստատության անձնակազմի հոգեբանասոցիալական աջակցության կազմակերպման և իրականացման պատասխանատվությունները և մեխանիզմները,
2. Արտակարգ իրավիճակից հետո, վերականգնման փուլում, սովորողների հետ տարվող հոգեբանասոցիալական աշխատանքների պլանները,
3. Նախապատրաստական փուլում սովորողների և մանկավարժների սթրեսադիմացկունության և հոգեկան կայունության որակների զարգացման աշխատանքները:

Նախքան հոգեբանասոցիալական աշխատանքների պլանավորումը, անհրաժեշտ է որոշել (նշանակել) հոգեբանասոցիալական աշխատանքների պատասխանատու: Եթե ուսումնական հաստատությունն ունի հոգեբան և/կամ սոցիալական մանկավարժ, ապա ՀՍ

աշխատանքների պատասխանատու պետք է նշանակվի նրանցից մեկը՝ առաջնայնությունը տալով հոգեբանին: Եթե հաստատությունում աշխատում են մի քանի հոգեբաններ, ապա նախընտրությունը տրվում է այն մասնագետին, որն ունի առավել մեծ պատրաստվածություն ԱԻ հոգեբանության բնագավառում, իսկ մյուսներն ընդգրկվում են հոգեբանասոցիալական աջակցման թիմում:

Եթե հաստատությունում չկան հոգեբաններ կամ սոցիալական մանկավարժներ, ապա ՀՍ աշխատանքների պատասխանատու նշանակվում է հոգեբանություն առարկա դասավանդող ուսուցիչը կամ այն մանկավարժը, որն ունի անհրաժեշտ անձնային հաղորդակցման հմտություններ և կազմակերպչական ունակություններ: Եթե ծնողների շրջանում կա հոգեբան, ապա հոգեբանասոցիալական աջակցման պատասխանատվությունը կարող է հանձնարարվել նրան: Եթե պատասխանատու անձը չունի հոգեբանական պատրաստվածություն, ապա ուսումնական հաստատության ԱՌՆ պլանում պետք է նախատեսել նրա ուսուցման և վերապատրաստման համապատասխան միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակներում հոգեբանասոցիալական աջակցման պլանավորումը

Արտակարգ իրավիճակներում հոգեբանասոցիալական աջակցման նպատակներն են.

- օգնել բուռն հուզական ռեակցիաներ դրսևորող երեխաներին և մեծահասակներին,
- կանխել կամ մեղմել սթրեսային գործոնների հնարավոր բացասական ազդեցությունը երեխաների հետագա կենսագործունեության վրա,
- մասնագիտացված ծառայությունների հետ ապահովել օպերատիվ կապը և համագործակցությունը:

Այս նպատակների իրականացման համար, հոգեբանասոցիալական աջակցման պլանավորման փուլում պետք է լուծել հետևյալ խնդիրները.

- նախատեսել հնարավորինս անվտանգ տեղ հոգեբանների աշխատանքի համար, որտեղ, անհրաժեշտության դեպքում, կառանձնացվեն անհապաղ հոգեբանական աջակցության կարիք ունեցող երեխաները,
- բաշխել պատասխանատվությունները հոգեբանասոցիալական խմբի անդամների միջև (կախված հոգեբանների թվից՝ բաշխումը կարող է կատարվել ըստ տարիքային խմբերի կամ դասարանների այնպես, որ յուրաքանչյուր հոգեբանի ուշադրության դաշտում լինեն մոտավորապես նույն քանակով երեխաներ),
- սահմանել տեղեկատվության հավաքման և փոխանցման սխեմաները:

Նշված տեղեկությունները պետք է արտացոլվեն ՈՒՀ ԱՌՆ և ԱԻ պլանում:

Հոգեբանասոցիալական աջակցման տարեկան պլանավորումը

ԱՌՆ կարևոր ուղղություններից են՝ երեխաների մոտ սթրեսները հաղթահարելու կարողությունների ձևավորումը և զարգացումը, մանկավարժների հոգեբանասոցիալական պատրաստվածության մակարդակի բարձրացումը և ծնողների շրջանում լուսավորչական

աշխատանքների իրականացումը, ինչպես նաև խմբի անդամների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումը: Այս խնդիրները համարվում են հոգեբանասոցիալական խմբի նախապատրաստական փուլի գործունեության հիմնական ուղղությունները:

Ելնելով վերոգրյալից, ուսումնական հաստատության ԱՌՆ պլանում պետք է նախատեսվեն համապատասխան միջոցառումներ վերը նշված ուղղություններով:

Մանկավարժների և սովորողների հետ իրականացվող վերապատրաստումների համար առաջարկվող թեմաներն են.

1. Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման հայեցակետեր հոգեբանական տեսանկյունից.
2. Արտակարգ իրավիճակը, որպես **սթրեսածին** գործոն (հոգեֆիզիոլոգիական ռեակցիաներ, առաջնային պահանջմունքներ, անձնային ռեսուրսներ-սթրեսադիմացկունության ցուցանիշ).
3. **Անհապաղ** հոգեբանասոցիալական օգնություն (ԱՀՕ) (մինչև մասնագիտական աջակցություն՝ ըստ **առաջնայնության** կարևորման/)
4. **Խուճապը** և դրա ազդեցությունն արտակարգ իրավիճակների ժամանակ,
5. Սթրես, ճգնաժամ, հոգետրավմա.
6. Առաջին հոգեբանական օգնությունը երեխաներին ճգնաժամային իրավիճակներում.
7. Հոգեբանական **դեբրիֆինգը**՝ որպես առաջին հոգեբանական օգնության կարևորագույն պայման.
8. Ուսումնական հաստատության խնդիրները և գործառույթներն արտակարգ իրավիճակներում երեխաների **հոգեբանասոցիալական աջակցման** ոլորտում (պատասխանատու/ներ/ի առկայություն, մանկավարժների /դասվար, դասղեկների/ հոգեբանասոցիալական պատրաստություն).
9. Երեխաների **հոգեբանասոցիալական պաշտպանվածության** բարձրացման աշխատանքների պլանավորումը (սթրեսադիմացկունության ցուցանիշի գնահատում, իրազեկում, անհատական ռեսուրսների բացահայտում):

Յուրաքանչյուր տարվա պլանը մշակելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նախորդ տարվա կատարված աշխատանքների արդյունքներն ու քաղված դասերը, սովորողների և մանկավարժների հետաքրքրություններն ու պատրաստվածության մակարդակը, համայնքում և ուսումնական հաստատությունում տեղի ունեցած միջադեպերը, որոնք որոշակի հոգեբանական ազդեցություն են թողել սովորողների, մանկավարժների և ծնողների շրջանում:

► 5.5.4. Առաջին օգնության կազմակերպում

Առաջին օգնության խմբի անհրաժեշտությունը ուսումնական հաստատությունում

Առօրյա կյանքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում մինչև մասնագիտացված օգնության ժամանումը ճիշտ առաջին օգնություն ցուցաբերելը անհամեմատ մեծացնում է տուժածին փրկելու հավանականությունը և թեթևացնում մասնագետների աշխատանքը:

Հետևաբար, ուսումնական հաստատություններում ԱՕ հմտություններին տիրապետող անձանց առկայությունը սովորողների և աշխատակազմի անդամների անվտանգության երաշխիքն է: Այս առումով խիստ կարևորվում է ՈՒՀ-ում ԱՕ խմբի ստեղծումը, ինչպես նաև վերջինիս գործառույթների հստակ սահմանումը ՈՒՀ առօրյա գործունեության ժամանակ և արտակարգ իրավիճակներում: ԱՕ խմբի հիմնական խնդիրներից է բարելավել ՈՒՀ անձնակազմի և սովորողների, ինչպես նաև, հնարավորության դեպքում, համայնքի ԱՕ կարողությունները:

ԱՕ խմբի կազմը որոշվում է ՈՒՀ ԱՌՆ և ԱԻ խորհրդի կողմից՝ ելնելով ՈՒՀ հնարավորություններից, աշխատակազմի և սովորողների թվաքանակից: Խումբը ղեկավարում է ՈՒՀ բուժաշխատողը կամ տվյալ պարտականությունները ստանձնած աշխատակիցը:

Խմբի անդամները ՈՒՀ աշխատակազմի անդամներն են, ովքեր ունեն համապատասխան ԱՕ գիտելիքներ ու հմտություններ: ԱՕ խմբում ներգրավվում են նաև սովորողներ:

ԱՕ գիտելիքներ ու հմտություններ կարելի է ստանալ համապատասխան մասնագիտացված կառույցներում (օրինակ՝ Հայկական Կարմիր Խաչի ընկերությունում)

Խմբի առօրյա գործառույթների մեջ մտնում են՝

- ուսումնական հաստատությունում և համայնքում ԱՕ գիտելիքի տարածմանը նպաստելը,
- ԱՕ արկղիկի պարունակության պարբերական ստուգումն ու անհրաժեշտ նյութերով համալրումը,
- ԱՕ միջոցառումների (պարապմունքներ, խաղեր, մրցույթներ) կազմակերպումը,
- խմբի ԱՕ հմտությունների շարունակական կատարելագործումը,
- տարահանման վարժանքների ժամանակ ԱՕ տրամադրումն ու համագործակցությունն այլ խմբերի հետ:

Արտակարգ իրավիճակներում ԱՕ խմբի գործառույթների մեջ մտնում են.

- տուժածների տեսակավորումը,
- առաջին օգնության տրամադրումը և շտապօգնության աշխատակիցներին հանձնելը,
- սովորողների և աշխատակիցների անվտանգության ապահովմանն օժանդակելը,
- տուժածների վիճակի և ցուցաբերված օգնության վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը մասնագետներին,
- արագ արձագանքման համայնքային խմբերին և շտապօգնության աշխատակիցներին օժանդակելը:

Ուսումնական հաստատության ԱՌՆ և ԱԻ պլանում ԱՕ մասով պետք է ներառվի՝

1. ՈՒՀ սովորողներին և անձնակազմի անդամներին տրամադրվող ԱՕ կազմակերպման և իրականացման պատասխանատվության շրջանակները ու ԱՕ իրականացման կարգը, այդ թվում:

- նախօրոք որոշվի ՈԻՀ հարակից տարածքում անվտանգ տեղ, որտեղ ԱԻ դեպքում կկազմակերպվի տուժածներին ԱՕ տրամադրումը,
 - խմբի յուրաքանչյուր անդամի պատասխանատվության ոլորտը,
 - տուժածների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և մասնագետներին փոխանցման ձևաչափերը,
 - այլ խմբերի հետ համագործակցության ձևաչափերը և այլն:
2. Նախապատրաստական փուլում ԱՕ խմբի մասնագիտական պատրաստվածության կատարելագործման ուղղությամբ աշխատանքները, այդ թվում.
- մեկ տարվա կտրվածքով նախատեսված ԱՕ միջոցառումների (պարապմունքներ, խաղեր, մրցույթներ և այլն) ցանկը,
 - ԱՕ տրամադրման ներառմամբ տարահանման վարժանքների ժամանակացույցը և այլն:
3. ՈԻՀ սովորողների և աշխատակազմի ԱՕ գիտելիքների և հմտությունների բարելավման ուղղությամբ աշխատանքները, այդ թվում.
- մեկ տարվա կտրվածքով ՈԻՀ սովորողների և աշխատակազմի համար նախատեսված ԱՕ դասընթացների ցանկը,
 - ԱՕ խմբի կողմից նախատեսված միջոցառումների ցանկը՝ ուղղված ՈԻՀ սովորողների և աշխատակազմի, ինչպես նաև համայնքի բնակիչների շրջանում ԱՕ ցուցաբերման խրախուսմանը և այլն:

► 5.5.5. Տարահանման կազմակերպում

Հայաստանի Հանրապետությունում գործող բնակչության պաշտպանության ձևերն են՝ տարահանումը, պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, որոնք կազմակերպում ու իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները:

Տարահանումը վերը նշված ձևերից ամենաարդյունավետն է: Տարահանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այն պետք է իրականացվի մինչև ԱԻ խոցման գործոնների ի հայտ գալը կամ անմիջապես սպառնալիքի առաջացման պայմաններում:

Տարահանման կազմակերպումն ու անցկացումը պահանջում է տարահանման միջոցառումների նախնական պլանավորում և ՈԻՀ անձնակազմի բազմակողմանի պատրաստում:

Տարահանման կազմակերպման խումբը

Տարահանման միջոցառումների կազմակերպման համար ԱՌՆ և ԱԻ խորհրդի կազմում ստեղծվում է տարահանման կազմակերպման խումբ, որը ղեկավարում է խորհրդի ղեկավարի

տեղակալը: Խմբում ընդգրկվում են ՌԻՀ անձնակազմ (պահակ, պարետ), բարձր դասարանների սովորողներ, ծնողներ, համայնքի ներկայացուցիչներ:

Տարահանման կազմակերպման խմբում պահակների և պարետների ներգրավումը պարտադիր է, քանի որ իրենց լիազորությունների շրջանակում է պահուստային ելքերի բացումը:

Տարահանման կազմակերպման խումբն իրականացնում է ամսական պարապմունքներ, որոնցում ամբողջ ուսուցչական կազմի մասնակցությունը պարտադիր է:

Ուսումնական տարվա ընթացքում խումբը կազմակերպում է առնվազն 3 տարահանման վարժանք:

Եթե ՌԻՀ ընդգրկված է համայնքի տարահանման պլանում, ապա տարահանման կազմակերպման խմբի կազմում պետք է նախապատրաստվեն նաև թաղային միավորի բնակչության հաշվառման, բնակչության ընդունման, անհրաժեշտ կենսաապահովման և խոցելի խավի հետ տարվող աշխատանքներ իրականացնող օղակներ կամ այդ գործառույթները պարտադիր արտացոլված լինեն տարահանման կազմակերպման խմբի պլանում:

Տարահանումը

Այս բաժնում նկարագրվում են Տարահանման կազմակերպման խմբի գործառույթները, որոնք բաժանվում են 2 հիմնական խմբի.

Առաջին խումբ, երբ տարահանումը կազմակերպվում է ուսումնական հաստատությունում ԱԻ առաջացման դեպքում: Այս դեպքում տարահանումը իրականացվում է համաձայն ուսումնական հաստատության յուրաքանչյուր հարկի համար մշակված տարահանման սխեմայի (տարահանման ուղիների ցուցանակների առկայությունը պարտադիր է): Տարահանումը կազմակերպվում է տարահանման խմբի անդամների կողմից, որոնք պատասխանատու են տարահանման ուղիների ու ելքերի բացման համար:

Սովորողների անմիջապես տարահանումն իրականացնում են ուսուցիչները և բարձր դասարանների աշակերտները, որոնք տարահանումից հետո իրականացնում են տարահանվածների հաշվառում ուսումնական հաստատության հարակից անվտանգ ազատ տարածքում:

Երկրորդ խումբ, երբ ուսումնական հաստատությունը խոշոր ԱԻ դեպքում հանդիսանում է Թաղային միավորի (ԹՄ) բնակչության առաջնային տարահանման ընդունման վայր: Այս դեպքում տարահանման կազմակերպման խմբի կողմից իրականացվում է աջակցություն ԹՄ տարահանված բնակչության ընդունման և հաշվառման հարցերում՝ տեղական ինքնակառավարման մարմնի հետ սերտ համագործակցության պայմաններում: Այս դեպքում կարող է իրականացվել աջակցություն նաև ԹՄ խոցելի և սահմանափակ կարողություններով մարդկանց տարահանման կազմակերպումը:

ԹՄ տարահանվողների աջակցմանն ու տարահանման կազմակերպման մեջ ներգրավվում են ՌԻՀ ստեղծված բոլոր խմբերը և խմբերում չընդգրկված ՌԻՀ անձնակազմը: Աշխատանքներում ներգրավվում են նաև աշակերտական խորհուրդներ և ծնողական կոմիտեներ:

Այս բաժնում ներկայացվում են նաև կազմակերպչական ու նախապատրաստական միջոցառումներ ԹՄ բնակչության առաջնային տարահանումը կազմակերպելու համար, որոնք պլանավորվում և կազմակերպվում են համայնքի ղեկավարության կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ:

Ուսումնական հաստատության ԱՌՆ պլանի տարահանման բաժինը.

Տարահանման պլանը մշակվում է փուլ առ փուլ, որն ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

- ՈՒՀ սպառնացող վտանգների կանխորոշում և գնահատում.
- տարահանման ենթակա մարդկանց թվաքանակ.
- հայտարարությունների տեքստերի մշակում.
- արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ օգնության որոշում (փրկարարական, բժշկական, հրշեջ և այլն).
- անվտանգ գոտու որոշում.
- ծանոթացում ՈՒՀ տարահանման պլանին.
- արտակարգ իրավիճակներում ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների ամբողջությամբ տարահանում, հաշվառում և տարրական կենսաապահովման իրականացում մինչև ԱԻ ավարտը կամ հետագա տարահանում ընտանիքի անդամների հետ.
- ԹՄ բնակչության ընդունման կազմակերպումը.
- ընդհանուր նախապատրաստական փուլում սովորողների և մանկավարժների տարահանման նախապատրաստումը և վարժանքների կազմակերպումը.
- ՈՒՀ շենքային պայմանների հնարավորություններից ելնելով՝ պատասպարման պլանի մշակումը և պատասպարման վարժանքների իրականացումը:

Տարահանման սխեմաները

Գրաֆիկական մասն իրենից ներկայացնում է ՈՒՀ շենքի գծագիր: Տարահանման պլանում գծանշվում է տարահանման ընդհանուր ուղին, որը բաժանվում է տեղամասերի: Տարահանման ուղիները որոշելիս անհրաժեշտ է մարդկային հոսքերը մասնատել, որպեսզի ելքերի մոտ կանխվեն հնարավոր կուտակումներն ու խցանումները:

Պետք է բացառել հնարավոր հանդիպակաց և խաչահատվող հոսքերը:

Պլանում հոծ կանաչ սլաքներով նշվում են տարահանման հիմնական ուղիները, կետագծված կանաչ սլաքներով՝ տարահանման պահուստային (լրացուցիչ) ուղիները: Տարահանման պլանում պետք է նշված լինեն կրակմարիչների, հրդեհային ինքնաշխատ և անվտանգության այլ համակարգերի տեղակայման և միացման տեղերը:

Տարահանման սխեմաները փակցվում են բոլոր հարկերում:

Տարահանման սխեմաների հետ մշակվում է հուշաթերթիկ:

Տարահանման եղանակները

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ՈՒՀ-ում գործում է տարահանման երկու եղանակ՝ կանխարգելիչ (նախնական) և անհապաղ (անհետաձգելի):

Կանխարգելիչ տարահանման համար հիմք են համարվում հնարավոր աղետի մասին համապատասխան մարմինների կարճաժամկետ կանխատեսումը:

Ստացված տվյալների հիման վրա և հիմք ընդունելով լիազոր մարմնի առաջարկությունները՝ ՈՒՀ ղեկավարն ընդունում է տարահանման իրականացման որոշում՝ նշելով տարահանման վայրը

և հետագա գործողությունները: Այս դեպքում կապի և ազդարարման միջոցներով ազդարարվում է ՌԻՀ ամբողջ կազմը, այնուհետ մշտական կապ է պահպանվում լիազոր մարմնի հետ, վերջինիս հաղորդվում է տարահանման ավարտի, ընտրված տարահանման վայրի մասին տեղեկատվությունը: Հետագա քայլերն իրականացվում են լիազոր մարմնի առաջարկությունների և ցուցումների հիման վրա:

ՌԻՀ տարածքից դուրս սովորողների ու ՌԻՀ անձնակազմի տարահանումը իրականացվում է լիազոր մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմինների օգնությամբ:

Ահ հանկարծակի առաջացման դեպքում բացառիկ նշանակություն ունի ժամանակի գործոնը:

Արագընթաց ԱԻ (հրդեհ, երկրաշարժ, փլուզում, սողանք) տեղի են ունենում հանկարծակի և հիմնականում առանց նախանշանների, ուստի, հաշվի առնելով նման իրավիճակներում ժամանակի սղությունը, իրականացվում է ՌԻՀ աշակերտների և անձնակազմի անհապաղ տարահանում: Այս դեպքում տարահանման որոշումը կայացվում է ՌԻՀ ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կամ Տարահանման կազմակերպման խմբի ղեկավարի կողմից: Որոշում կայացնող անձը նախանշում է տարահանման վայրը ու հետագա գործողությունները: Տարահանման ազդանշանը տրվում է անմիջապես:

Արագընթաց ԱԻ-ների ժամանակ հնարավոր է նաև տարահանում առանց տարահանման ազդանշանների: Այս դեպքում սովորողների տարահանումը կազմակերպում և ղեկավարում է դասը վարող ուսուցիչը, անհապաղ տարահանումը կազմակերպվում է ուսուցիչների և Տարահանման կազմակերպման խմբի միջոցով: Նման դեպքերում տարահանման հաջողությունը ուղղակիորեն կախված է ուսուցչական կազմի և Տարահանման կազմակերպման խմբի ներդաշնակ գործողություններից, որը հնարավոր է դառնում պարբերաբար պարապմունքների ու վարժանքների շնորհիվ:

5.5.6. Հրդեհաշիջման կազմակերպումը

Հրդեհի առաջացումը

Ուսումնական հաստատության հարակից տարածքում կամ ՌԻՀ-ում հրդեհ կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- Ուսումնական հաստատության տարածքում վթարի կամ աղետի դեպքում (երկրորդական գործոն): Օրինակ, ուսումնական հաստատության հարևանությամբ գտնվող պոտենցիալ վտանգավոր օբյեկտում (քիմիապես վտանգավոր, հրդեհապայթյունավտանգ, սննդի, որոնք արտադրության ընթացքում օգտագործում կամ պահեստավորում են ուժեղ ներգործող թունավոր կամ դյուրավառ նյութեր և քիմիկատներ).
- Երկրաշարժի կամ այլ բնական վտանգավոր երևույթի ժամանակ (երկրորդական գործոն).
- ՌԻՀ-ում հրդեհային անվտանգության կանոնները չպահպանելու և այլ դեպքերում:

ՈՒՀ-ում հրդեհի առաջացման հավանականությունը գնահատելու ժամանակ պետք է ուսումնասիրել պատճառները և նշել կանխարգելիչ միջոցառումները՝ հաշվի առնելով առկա ուժերը և միջոցները:

Հրդեհաշիջման կազմակերպումը

Այս բաժնում նկարագրվում են հրդեհաշիջման կազմակերպման խմբի աշխատանքներն ուսումնական հաստատությունում հրդեհի բռնկման դեպքում՝ ներառելով հրդեհաշիջման իրականացումն ուսումնական հաստատությունում առկա առաջնային հրդեհաշիջման միջոցներով (կրակմարիչներ, ավազ, ջուր և այլն), ժամանաձ հրշեջ-փրկարարների աջակցության ցուցաբերումն ու վերջիններիս ուղղորդման կազմակերպումը: Այս բաժնում նկարագրվում է նաև հրդեհաշիջման կազմակերպման խմբի փոխհամագործակցությունը տարահանման կազմակերպման խմբի հետ ՈՒՀ մասնակի կամ լրիվ տարահանման նպատակով:

Առանձին կետով նշվում է ՈՒՀ հրդեհային անվտանգության կանոնների ապահովումը և հրդեհային անվտանգության նախնական ու կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Հրդեհաշիջման կազմակերպման խումբը

Հրդեհաշիջման կազմակերպման համար ԱՌՆ և ԱԻ խորհրդի կազմում ստեղծվում է հրդեհաշիջման կազմակերպման խումբ, որի ղեկավարը նշանակվում է ՈՒՀ ղեկավարի հրամանով: Խմբում ընդգրկվում են ՈՒՀ անձնակազմը և բարձր դասարանների սովորողները, կարող են ընդգրկվել ծնողներ և ՀՀ ԱԻՆ մարմնի ներկայացուցիչներ:

Հրդեհաշիջման կազմակերպման խմբում բարձր դասարանցիների ներգրավումը նպատակահարմար է, քանի որ հանկարծակի ծագած փոքր հրդեհների դեպքում հնարավոր կլինի արագ և անվտանգ կազմակերպել հրդեհների մեկուսացումը և մարումը, ինչպես նաև արագ և արդյունավետ կազմակերպել ցածր դասարանների սովորողների տարահանումը:

Հրդեհաշիջման կազմակերպման խումբն իրականացնում է ամսական պարապմունքներ, որոնցում ամբողջ ուսուցչական կազմի մասնակցությունը պարտադիր է:

Ուսումնական տարվա ընթացքում խումբը կազմակերպում է առնվազն 3-5 հրդեհաշիջման վարժանք:

Ուսումնական հաստատության ԱՌՆ պլանի հրդեհաշիջման մասը պետք է ներառի.

- հրդեհաշիջման միջոցների կուտակում և պահպանում.
- հրդեհաշիջման միջոցներից օգտվելու կարգ.
- հրդեհների կանխարգելիչ միջոցառումների իրականացում.
- հրդեհային անվտանգության կանոնների սահմանում և պահպանում.
- հրդեհային անվտանգության նորմերի պահպանում (դռների բացման ուղղություն, միջանցքների կահավորում, վերանորոգման ժամանակ օգտագործվող նյութեր և այլն).
- անձնակազմի և սովորողների հրահանգավորում հակահրդեհային թեմաներով
- պարապմունքների և դասընթացների անցկացում.

- վարժանքների կազմակերպում և անցկացում.
- ՈՒՀ սպառնացող վտանգների կանխորոշում և գնահատում.
- հակահրդեհային համակարգի հիմնում (հրդեհային ինքնաշխատ ազդարարման համակարգ, հրդեհային ինքնաշխատ մարման համակարգ).
- աշակերտների և անձնակազմի ազդարարման կարգի սահմանում.
- հայտարարությունների տեքստերի մշակում.
- հրդեհի ժամանակ անհրաժեշտ օգնության որոշում և այդ օգնության հայցման եղանակներ (փրկարարական, բժշկական, հրշեջ և այլն).
- անվտանգ գոտու որոշում.
- ծանոթացում ՈՒՀ տարահանման պլանին:

Հրդեհի առաջացման դեպքում գործողությունները

h/h	Գործողություններն ըստ հերթականության	Կատարողը
1.	Ազդարարում/տեղեկատվության հաղորդում ՀՀ ԱԽՆ	Տնօրեն, Հրդեհաշիջման կազմակերպման խումբ (ՀԿԽ)
2.	Դպրոցի տարահանման մասին որոշման ընդունում	Տնօրեն, Տարահանման կազմակերպման խմբի ղեկավար
3.	Դպրոցի տարահանման կազմակերպում	Տարահանման կազմակերպման խումբ (ՏԿԽ)
4.	Դպրոցում մնացած մարդկանց ստուգում	ՏԿԽ
5.	Հրդեհային ինքնաշխատ համակարգի գործարկում	ՀԿԽ
6.	Անձնակազմի գործողությունների ղեկավարում՝ համակարգի գործունեության խափանման դեպքում	ՀԿԽ
7.	Հրդեհաշիջում սեփական ուժերով	ՀԿԽ
8.	Գույքի տարահանում	ՏԿԽ
9.	Այլ գործողություններ	Մասնագիտացված մնացած խմբեր

► 5.6. Կրթության շարունակականության ապահովումն արտակարգ իրավիճակներում

Ուսումնական հաստատությունը նախապատրաստական քայլեր է ձեռնարկում արտակարգ իրավիճակներում տվյալ հաստատության գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգնման ուղղությամբ՝ նպաստելով արտակարգ իրավիճակից տուժած անձանց, երեխաների ֆիզիկական պաշտպանության, սոցիալ-հոգեբանական, զարգացման և իմացական կարիքներին՝ ունենալով կենսապահպան և կենսափրկիչ նշանակություն: Ուսումնական գործընթացի վերականգնումը երեխաներին վերադարձնում է բնականոն կյանքի, կայունության, ապահովվածության զգացողությունը և կազմակերպվածությունը: Կրթությունը

կարող է փրկել մարդկային կյանքեր՝ ապահովելով նրանց ֆիզիկական պաշտպանվածությունը վտանգներից:

Ուսումնական գործընթացի վերականգնման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել պատրաստվածությանն ուղղված հետևյալ աշխատանքները.

10. Մատչելի և ապահով վայրում պահել ուսումնական հաստատության սովորողների, աշխատակազմի և ծնողների ցուցակը, որում նշվում է նրանց անուն ազգանունը, բնակության հասցեն (այդ թվում նաև էլեկտրոնային), հեռախոսահամարները, զբաղմունքը, և այլ տվյալներ՝ տպագիր տարբերակով և էլեկտրոնային կրիչների վրա:
11. Ուսումնական հաստատության դասավանդողների ռեզերվի կազմում և թարմացում, որում ներառվում են թոշակառու դասավանդողները, մանկավարժական բուհերում սովորողները, հարակից մասնագիտությունների տեր անձինք:
12. Արտակարգ իրավիճակներում դասավանդելու կարողությունների զարգացման նպատակով դասավանդողների և ռեզերվում ընդգրկված մասնագետների վերապատրաստման հնարավորությունների ստեղծում՝ այն ներառելով տարեկան գործողությունների մեջ:
13. Ուսումնական հաստատության կամ ժամանակավոր ուսումնական տարածքի խոցելիության, վտանգի և կարողությունների գնահատում ու մեղմացման աշխատանքների պլանավորում և իրականացում:
14. Կրթության կազմակերպման և մատչելիության ապահովման համար անվտանգ տարածքի ընտրության ձևաչափի նախապատրաստում, որը կարող է ներառել
 - ապահով, պաշտպանված տարածք,
 - վտանգներից, վնասակար նյութերից և իրերից (գազատարներ, բարձր լարման գծեր, ենթակայաններ, խողովակաշարեր, վառողային պայթուցիկ մնացորդներ, սուր մետաղներ և ապակու կտորներ և այլն) զերծ տարածք,
 - քամուց, անձրևից և փոշուց պաշտպանվելու համար ծածկի առկայություն,
 - մայրուղիներից և մատակարարման կետերից, ինչպես նաև ճահճացած ջրածածկույթներից և դրենաժային աղտոտված տարածքներից բավարար հեռավորություն,
 - երեխաների մեծամասնությանը, հատկապես աղջիկ և հաշմանդամ երեխաներին բնակության վայրին մոտ տարածք,
 - սանիտարական պայմանների և մաքուր ջրի հասանելիություն (խմելու և լվացվելու ջրի հասանելիություն, զուգարանների առկայություն, որը հաշվի է առնում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները, կրծողներից և վնասակար միջատներից պաշտպանվածությունը),
 - սոցիալական, հոգեբանական, տրանսպորտային, և այլ ծառայությունների տվյալներ,
 - արտակարգ իրավիճակում կրթության շարունակականությունն ապահովող ուսումնական պլանների և ծրագրերի պարզեցված փաթեթ,
 - արտակարգ իրավիճակների ժամանակ կիրառվող ուսումնական նյութերի և

պարագաների ցանկի մշակում ~~(տե՛ս հավելված 4)~~ և հնարավորության դեպքում, դրանց որոշակի պահուստների ձևավորում:

Տարեկան միջոցառումների պլանավորման ընթացքում ուսումնական հաստատությունը ստուգում է վերոհիշյալ փաստաթղթերի առկայությունը, ապահովում է դրանց թարմացումը, հուշագրեր է կնքում տարբեր ծառայություններ մատուցող կառույցների հետ, նախապատրաստում և իրականացնում է կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ և այլ գործողություններ, որոնք նպաստում են կրթության շարունակականության ապահովման նախապատրաստմանը:

5.7. Համագործակցություն

Համագործակցությունը կազմակերպվում և իրականացվում է նախապես մշակված ու հաստատված փոխգործողությունների փաստաթղթերի (պայմանագրեր/պլաններ) հիման վրա:

Համագործակցությունը համայնքապետարանի, մարզպետարանի, Երևանի քաղաքապետարանի հետ կազմակերպվում է ՈՒՀ ԱՌՆ ծրագրերով ու տարեկան պլաններով սահմանված միջոցառումների իրականացմանն ուղղությամբ՝ ներգրավելով ուսումնական հաստատությունը համայնքի ռիսկերի բացահայտման ու վերացման գործընթացներում: Նույն հարցերով, ինչպես նաև ԱԻ բնագավառում ուսուցման կազմակերպման և մեթոդական օգնության ցուցաբերման ուղղությամբ փոխգործողությունն իրականացվում է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների հետ:

Նշված բոլոր մարմինների հետ կազմակերպվում է փոխգործողություն տեղեկատվության փոխանակման, ՈՒՀ ԱՌՆ ու ԱԻ գործելու միջոցառումների իրականացման և հատկապես տարհանման կազմակերպման ոլորտում, մասնավորապես, երբ ուսումնական հաստատությունը հանդիսանում է շրջակա տարածքի բնակչության տարահանման առաջնային կետ:

5.8. Հավելվածներ (օրինակելի ձևեր և աղյուսակներ)

1. տարածքի քարտեզ և ուսումնական հաստատության հատակագիծ.
2. արտաքին, ներքին վտանգների և խոցելիության ու կարողությունների բացահայտման թերթիկներ.
3. ուսումնական հաստատության տնօրենի հրաման.
4. աղետներին պատրաստվածության սարքավորումների և պարագաների երաշխավորվող (առաջարկվող) ցանկ.
5. ազդարարման և ուսումնական հաստատության կառավարման ու կապի սխեմաներ.
6. աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների տարեկան պլան-ժամանակացույց.
7. տարահանման սխեմա և հուշաթերթ.
8. աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների միջոցառումների հաշվառման թերթիկ.

9. ուսումնական հաստատությունում և շրջակա տարածքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների վիճակագրական տվյալների և տեղեկությունների մատյան.
10. ծնողների կամ խնամակալների տվյալների բազա.
11. արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում ահազանգման մարմինների ցանկ.
12. ստանդարտ գործողությունների ընթացակարգեր՝ ըստ բնորոշ աղետների.
13. աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների պլանի **մշակման գործընթացի ստուգացանկ:**

Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման կազմակերպումն ըստ բնորոշ **աղետների** (մշակվող հավելվածների համար)


Սպառնացող բնորոշ աղետներին արձագանքումը պլանում ներկայացվում է հավելվածների տեսքով, որոնք իրենցից ներկայացնում են գործողությունների հուշաթերթիկներ՝ ժամային և պատասխանատուների բաշխվածությամբ (աղետի ծագման դեպքում ի՞նչ ժամանակահատվածում, ինչպիսի՞ գործողություններ են իրականացվում և ո՞վ է պատասխանատու յուրաքանչյուր գործողության համար): Հավելվածներում ներկայացվում են տվյալ ուսումնական հաստատությանը սպառնացող արտաքին վտանգները, բացառությամբ երկրաշարժի և հրդեհի. վերջիններիս համար հավելվածներ մշակում են բոլոր ուսումնական հաստատությունները:

Հավելված N 2

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի
2016 թվականի մայիսի 06-ի թիվ.494-Ա
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի մայիսի 18-ի թիվ.498-Ա
համատեղ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

տարածքի քարտեզի և ուսումնական հաստատության հատակագծի



Հավելված N 3

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի
2016 թվականի մայիսի 06-ի թիվ.494-Ա
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի մայիսի 18-ի թիվ.498-Ա
համատեղ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտման թերթիկների



Արտաքին վտանգների և խոցելիության թերթիկ (անվտանգություն)			
Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	ԱՐԺԵՔ	ՆՇՈՒՄՆԵՐ
1	Շենքի նախագծային սեյսմակայունությունը	5, 6, 7, 8, 9, 10 բալ ?	
2	Շենքի փաստացի սեյսմակայունությունը	5, 6, 7, 8, 9, 10 բալ ?	
3	Շենքի գտնվելու սեյսմիկ գոտին	1, 2, 3 -րդ գոտի	
4	Շենքի վթարայնության աստիճանը	1, 2, 3, 4 , 5 կարգ	
5	Շենքի խոցելիության մակարդակը (աստիճանը)		
6	Քարաթափում	Այո/ոչ	
7	Սողանք	Այո/ոչ	
8	Սելավ	Այո/ոչ	
9	Ջրածածկում	Այո/ոչ	
10	Շինությանը սպառնացող այլ երկրաբանական վտանգ/տեսակը/	Այո/ոչ	
11	Հիդրոոգերկույթաբանական վտանգներ	Այո/ոչ	
12	Դպրոցի հարակից տարածքներում գտնվող		
12.1	Ճառագայթային կամ քիմիապես վտանգավոր օբյեկտները	Այո/ոչ	
12.2	Հրդեհապայթյունավտանգ օբյեկտները	Այո/ոչ	
12.3	Պայթյունավտանգ օբյեկտները	Այո/ոչ	
12.4	Բարձրավոլտ էլ. հաղորդակցման գծերը	Այո/ոչ	
12.5	Գազի բարձ ճնշման խողովակաշար	Այո/ոչ	
12.6	Աղբի մշակման կուտակման վայրերը	Այո/ոչ	
12.7	Վտանգավոր թափոնները ու այլ թաղվածքները	Այո/ոչ	
12.8	Կից բարձրահարկ շենքերը	Այո/ոչ	
12.9	Այլ վտանգավոր օբյեկտներ / օրինակ՝ վերամբարձ կռունկ, բարձր խողովակ. . . /	Այո/ոչ/ Այո-ի դեպքում թվարկել	

Ներքին վտանգների և խոցելիության թերթիկ (անվտանգություն)			
Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	ԱՐԺԵՔ	ՆՇՈՒՄՆԵՐ
1	Դպրոցի շենքի կառուցվածքային վտանգները		
1.1	Դպրոցի ստորին հարկի/հարկերի/ պատուհանների վանդակաճաղերը հանված են կամ շարժական են	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
1.2	Դպրոցի տարահաման ելքերի դռները բացվում են դեպի դուրս	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
1.3	Դպրոցի հիմնական ելքերի դռները երկփեղկանի են	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
1.4	Պարբերաբար ստուգվում է պահուստային դռների գործածելիությունը	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
1.5	Վերացված են դպրոցի, դասարանների դռների բացվածքների շեմերը եւ հատակի բարձրության տարբերությունները	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
1.6	Դասարաններում, միջանցքներում ընդհանուր օգտագործման վայրերում վերացված են կառուցվածքային ելուստները	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	
2	Դպրոցի ոչ կառուցվածքային վտանգները		
2,1	Հուսալիորեն ամրացված են պատին, հատակին, առաստաղին, կամ աշխատատեղին. • կահույքը, • օդափոխիչները, օդորակիչներ, ջրատաքացուցիչները, • նկարները, գրատախտակները, • հրդեհային անվտանգության միջոցները, • լուսավորող սարքերը • էլեկտրոնային սարքավորումները / հեռուստացույցը, համակարգիչը և այլն/ • անիմներով տեղաշարժվող ծանր իրերը /դաշնամուր/ • այլ առարկաներ	• Լիովին • Մասամբ • Չի համապատասխանում	

2.2	Պատուհանագրգերը ազատ են / առաջին հարկ/:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.3	Արգելափակված չեն ծանր և մեծածավալ առարկաներով. • տարահաման ուղիները. • տարահաման հիմնական ելքերը. • տարահաման պահուստային ելքերը:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.4	Միջանցքների հատակը ծածկված չէ գորգերով կամ ուղեգորգերով, իսկ եթե ծածկված է՝ ապա դրանք հուսալիորեն ամրացված են հատակին	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.5	Պատուհանների ապակիները ծածկված են հատուկ թաղանթով:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.6	Դասասենյակների, դահլիճների նստարանների քանակը և շարքերի միջև հեռավորությունը համապատասխանում է նախագծման	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.7	Դպրոցի մարզադահլիճի նստատեղերի քանակը չի գերազանցում դպրոցի անձնակազմի 20 տոկոսը:	այո/ոչ	
2.8	Դահլիճի աթոռներն ամրակներով ամրացված են հատակին:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.9	Դպրոցի հատակային ծածկույթը սայթաքուն չէ	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
2.10	Դպրոցի (դասարանների) պատերը հարդարված չեն դյուրավառ նյութերով	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	

2.11	Լաբորատորիաներում և այլ աշխատասենյակներում պահվող դյուրավառ նյութերի քանակը չի գերազանցում մեկ հերթափոխի համար նախատեսված քանակը: Ուսումնական գործընթացի վերջում դյուրավառ նյութերը լցվում են հատուկ տարողությունների մեջ և լաբորատորիայից դուրս են բերվում /չեն լցվում կոյուղի/:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
3	ԱԻ-ում հատուկ ծառայությունների ավտոմեքենաների /հրշեջ փրկարարական, շտապ օգնության, ոստիկանության/ մոտեցման համար ազատ են պահվում դպրոցամերձ ուղիները /նաև դիտահորերը, հրդեհային սանդուղքները/:	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
4	Տարահաման ուղիների արգելափակման դեպքում ջրի աղբյուրին մոտենալու համար տեղադրված են շրջանցման ուղղությունը ցույց տվող նշաններ	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
5	Դպրոցը ապահովված է հրդեհային անվտանգության միջոցներով/ հրդեհային պահարաններ, կրակմարիչներ, հրդեհային անվտանգության տեղկատուներ կամ ազդարարման կոճակներ եւ այլն	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
6	Հրդեհային պահարանները համալրված են հրդեհային թեւքերով, փողերով եւ կապարակնքված են	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
7	Կրակմարիչները լիցքավորվում են ժամանակին /տարեկան 1 անգամ/	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
8	Պարբերաբար ստուգվում է կրակմարիչների պիտանելիությունը	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	

9	Դպրոցում գործում են ԱԻ-ում աշակերտների եւ անձնակազմի տարահաման պլաններ/ հարկերի, դասարանների, ընդհանուր օգտագործման վայրի եւ այլն/, որոնք փակցված են նախասրահում, միջանցքներում, դասասենյակներում, ընդհանուր օգտագործման վայրերում	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
10	Դպրոցի հարակից տարածքը պահվում է մաքուր վիճակում	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
11	Տարահաման պլանի մեջ նշված են բուժ. կետի, էլեկտրասնուցման վահանակների կոճակների, հրշեջ ծորակների, կրակմարիչների, կապի/ հեռախոսի/ եւ ազդարարման միջոցների եւ դպրոցում առկա անվտանգության այլ միջոցների տեղակայման վայրերը	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
12	Նրքին հրդեհային ծորակները ոչ պակաս, քան տարեկան 2 անգամ (գարուն-ամառ, աշուն-ձմեռ) ենթարկվում են տեխնիկական զննման՝ ջրի բացթողման միջոցով	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
13	Դպրոցի տարածքը պահվում է մաքուր վիճակում, այրվող նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում եւ դուրս են բերում դպրոցի տարածքից	· Լիովին	
		· Մասամբ	
		· Չի համապատասխանում	
14	Պատուհանի նյութը	փայտ	
		մետաղ	
		մետաղապլաստե	
15	Պատուհանի տեսակը	միափեղկանի բացվող	
		երփեղկանի բացվող	
		երփեղկանի չբացվող	
		միափեղկանի չբացվող	
16	Տանիքի կառուցվածքը	հարթ	
		փայտյա	
		մետաղյա	

17	Տանիքի ծածկույթի տեսակը	գլանափաթեթային	
		մետաղական	
		կերամիկական	
		ասբեստային	
18	Հատակի ծածկի տեսակը	փայտյա	
		կերամիկական	
		լամինատ	
		լինոլյում	
		և այլն	

Կարողությունների բացահայտման թերթիկ (կառավարում և ուսուցում)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	ԱՐԺԵՔ	ՆՇՈՒՄՆԵՐ
1. Կառավարման համակարգի առկայություն			
1.1	Տնօրենի հրաման	առկա է	
1.2	ԱՌՆ և ԱԻ խորհրդի կազմ	քանակ	
1.3	Ուսուցիչներ	քանակ	
1.4	Աշակերտներ	քանակ	
1.5	Ծնողներ	քանակ	
1.6	Համայնքի ներկայացուցիչներ	քանակ	
1.7	Կրթության անընդհատության ապահովման պատասխանատու	առկա է	
1.8	Հատուկ կարիքներով երեխաների հարցերով պատասխանատու	առկա է	
1.9	Սոցիալ-հոգեբանական աջակցության ապահովման պատասխանատու	առկա է	
1.10	Այլ ներկայացուցիչներ	քանակ, թվարկել	
2. Կարողություններ			
2.1	Համագործակցությունը պետական մարմինների և ՏԻՄ-ի հետ		
2.2	Համագործակցությունը տեղական կամ միջազգային կազմակերպությունների կամ կառույցների հետ		
2.3	Վերապատրաստում (ԱՌՆ) վերջին 3 տարվա ընթացքում		
2.3.1	Տնօրեն	քանի անգամ	
2.3.2	Խորհրդի անդամներ	քանի անգամ	

2.3.3	Ուսուցիչներ	քանի անգամ	
2.4	ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի առկայություն	այո/ոչ	կցել ստուգացանկը էլեկտրոնային տարբերակում
2.5	ԱՌՆ և ԱԻ գործելու պլանը ամեն տարի վերանայվում է	այո/ոչ	
2.6	Ռեսուրսներ		
2.6.1	ՈՒՀ տարեկան բյուջեում ԱՌՆ հատկացումները	գումարի չափ	
2.6.2	Ազդարարման ներքին համակարգի առկայություն	այո/ոչ	
2.6.3	Հատուկ տեսա-ձայնային ազդանշան	այո/ոչ	
2.6.4	Շչակ	այո/ոչ	
2.6.5	Ձեռքի զանգ	այո/ոչ	
2.6.6	Դպրոցական զանգ	այո/ոչ	
2.6.7	այլ	թվարկել	
2.6.8	Ներքին ռադիոցանց	այո/ոչ	
2.6.9	Բարձրախոս	այո/ոչ	
2.6.10	Ավանդական միջոցներ	այո/ոչ	
2.6.11	Հեռախոսակապ	այո/ոչ	
2.6.12	Համացանց	այո/ոչ	
2.5	Տվյալ բնակավայրում ազդարարման համակարգի առկայություն	այո/ոչ	
2.6	Դպրոցի հեռավորությունը մոտակա ազդարարման համակարգի միջոցներից (մ)		
2.7	Հակահրդեհային միջոցների առկայությունը, այդ թվում	այո/ոչ	
2.7.1	հակահրդեհային ազդարարման ներքին համակարգ		
2.7.2	հակահրդեհային ազդարարման կենտրոնացված համակարգ		
2.7.3	ավտոմատ հրդեհաշիջման համակարգ		
2.7.4	պարզագույն հրդեհաշիջման միջոցների առկայություն	այո, ոչ	

2.8	Հալոցքաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ	ջրհորդան	—
		հեղեղատար կոյուղի	
		բացակայում է	
3. Հաշվետվողականություն և մշտադիտարկում			
3.1	Խորհրդի նիստերի արձանագրություն	Այո	կցել
3.2	ԱՌՆ կատարված աշխատանքների հաշվետվություն	Այո	կցել
4. Ուսուցում			
4.1	ԱՌՆ և անվտանգ կենսագործունեության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցչական անձնակազմ		
4.1.1	Վերապատրաստում անցած տարրական դասարանների ուսուցիչներ	քանակ	
4.1.2	Վերապատրաստում անցած միջին դասարանների ուսուցիչներ	քանակ	
4.1.3	Վերապատրաստում անցած ավագ դասարանների ուսուցիչներ	քանակ	
4.2	ԱՌՆ և անվտանգ կենսագործունեության տեսական և գործնական ուսուցում		
4.2.1	Ուսուցմանը հատկացվող տեսական ժամաքանակ		
4.2.2	Ուսուցմանը հատկացվող գործնական ժամաքանակ		
4.2.3	Ուսուցման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի առկայություն	առկա է/առկա չէ	
4.2.4	Ուսուցման համար անհրաժեշտ պարագաների և սարքավորումների առկայություն	առկա է/առկա չէ	
4.3	ԱՌՆ և անվտանգ կենսագործունեությանն ուղղված արտադասարանական աշխատանքներ		
4.3.1	Համապատասխան խմբակների առկայություն	այո/ոչ	
4.3.2	Մրցույթների կազմակերպում և/կամ մասնակցություն	այո/ոչ	
4.3.3	Էքսկուրսիաների կազմակերպում	այո/ոչ	
4.4	Տարահաման վարժանքներ		
4.4.1	Դպրոցի տարահաման տարեկան վարժանքների կազմակերպում	քանի անգամ	



4.4.2	Տարահաման վարժանքների միջին տևողությունը	քանակ	
-------	--	-------	--

Հավելված N 4

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի
2016 թվականի մայիսի 06-ի թիվ.494-Ա
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2016 թվականի մայիսի 18-ի թիվ.498-Ա
համատեղ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ուսումնական հաստատության տնօրենի հրամանի



(Ուսումնական հաստատության անվանումը)

ՏՆՕՐԵՆ

«___» _____ 20--թ

ՀՐԱՄԱՆ N___

Բնակավայր

